

Վերջացնելով նկարագրութիւնս Արարատի Խմբագրութիւնը շր-
նորհաւորումէ տարեմուտը և՛ մազթումէ Աստուծուց զօրութիւն,
կարողութիւն և կեանք, որ ողջ առողջ կարողանանք մեր ան-
ցեալ վաստակոց արդիւնքը վայելել. կիսատ մնացած բարի գոր-
ծերի յաջող աւարտը տեսնել, նոր նոր բարի և օգտակար գործ
սկսել և յաջողութեամբ աւարտել: Տայ Աստուած որ ուրախ սրը-
տով ցամաք աչքով շատ այս տեսակ տարիներ անցկացնենք:

ԿՐՕՆԱԿԱՆ

ՅԻՍՈՒՍԻ ԾՆՈՒՆԴԻ:

Սիրելի մանուկներ: Յիսուսի Ծնունդը շնորհաւորելով այս ան-
գամ՝ Նորա ծննդեան պատմութիւնը պէտքէ անեմ, յուսով եմ
թէ մտագրութեամբ կրլսէք և մտքներումդ կըպահէք:

Մարդիկ երկար ժամանակ մոռացել էին այն Աստուծուն, որ
ստեղծել է այս աշխարհը. մոռացել էին իրանց և երկիրքն ու եր-
կիրը ստեղծող ճշմարիտ Աստուծուն. կռապաշտութեան խաւարի
մէջ կորել էին այնպէս, ինչպէս որդիք մոռանալով իրանց ծնողին
ու հայրենական տունը, օտարութեան մէջ կորչումեն: Արդիք որ-
քան մոռանալու լինին իրանց ծնողներին, բայց ծնողք բնաւ չեն
մոռանում և յիշումեն անգաղար իրանց զաւակներին և նոցա
համար հոգս են անում: Այսպէս էլ Աստուած իբրեւ ամենաբարի և
սիրելի Հայր, կորած մարդկութիւնը գտնելու և գէպ ի լոյսը ա-
ռաջնորդելու համար ուզարկեց աշխարհ իւր սիրելի Արդուն՝ որին
մենք Յիսուս Քրիստոս ենք անուանում. որի ծննդեան տօնը կա-
տարումենք Յունիարի 6 ին փառաւոր հանդիսով: Աւրեմն պատ-
մենք թէ ո՞վ էր Մարիամ Ս. կոյսը, ինչպէս յղացաւ, ինչպէս ծնաւ
նա Յիսուս Փրկչին:

Գրեթէ 1900 տարի առաջ Հրէաստանում կար Յովակիմ անու-
նով մի մարդ, որի կնոջ անունը Աննա էր. սղքա երկուքն էլ ար-
դար, սուրբ և Էջաքիմի մարդիկ էին. բոլոր ծանօթները սիրում
ու յարգում էին նոցա. բայց այսքան սիրոյ և յարգանքի մէջ Յո-
վակիմն ու Աննան տխուր էին, որովհետեւ ծերացել էին և զա-

ւակ չունէին, իսկ զաւակ չունենալը հրէաների մէջ լաւ բան չէր: Աստուած որ ամեն բարի մարդկանց ուրախացնումէ, ուրախացրեց Յովակիմին ու Աննային էլ նոյա ծերութեան ժամանակ տալով մի աղջիկ զաւակ, որի անունը Մարիամ դրին: Յովակիմն ու Աննան խոստացան այս աղջիկը իբրեւ Աստուծոյ պարգեւ՝ դարձեալ Աստուծոյ նուիրել: ուստի երբոր փոքրիկ Մարիամը երեք տարեկան դարձաւ՝ նորա ծնողքը ընծայեցին նորան տաճարին: Այդ տեղ նա սովորեց Աստուծոյ բոլոր պատուէրները և մի շատ բարի, աշխատասէր, առաքինի և աղօթասէր աղջիկ դարձաւ: Մարիամ իւր ծնողաց մահից յետոյ յանձնուեց իւր բարեկամ արդար Յովսէփին:

(Աւետարան, Մատ. Ա. Գ. Դուկ. Ա. Բ.):

Երբ մի անգամ Մարիամ Ա. կոյսը աղօթումէր՝ Գաբրիէլ հրեշտակապետը Աստուծոյ հրամանով երեւց նորան և ասաց. « Ուրախ եղիր, Տէրը քեզ հետ է »: Սուրբ կոյսը այս բանի վերայ շրփոթուեց, և մտածումէր թէ ի՞նչպիսի բան կը լինի այս ողջոյնը, հրեշտակը ասաց նորան. « Մի վախենար Մարիամ, որովհետեւ Աստուծուն հաճելի եղար. և ահա կը յղանաս ու կը ծնես որդի և նորա անունը Յիսուս (Փրկիչ) կը կոչեն, և Աստուած նորան կըրտայ Դաւթի աթոռը և Հրէաստանի վերայ կը թագաւորի յաւիտեան և նորա թագաւորութեանը վախճան չի լինիլ »: Մարիամը ասումէ հրեշտակին. ինձ այդ բանը ինչպէս կարող է լինել, որովհետեւ ամուսնացած չեմ: Հրեշտակը պատասխան տուեց և ասաց նորան. Սուրբ Հոգին կը գայ դէպ ի քեզ. և Բարձրելոյ զօրութիւնը քո վերայ հովանի կ'լինի: Որովհետեւ քեզանից ծնուելին սուրբ է և Աստուծոյ որդի կը կոչուի: Մարիամն էլ ասաց. թող քո ասածը լինի և հրեշտակը հեռացաւ:

Սուրբ կոյսը յղացաւ, իսկ արդար Յովսէփը տեսնելով այդ՝ մինչդեռ կամենումէր առանց ձայն հանելու հեռացնել իրանից, Աստուծոյ հրեշտակը երեւց նորան տեսեան մէջ և ասաց. Դաւթի որդի Յովսէփ, մի վախենար քեզ մօտ պառչելու Մարիամին, որովհետեւ նորանից ծնուածը Սուրբ Հոգուց է, կը ծնի որդի և նորա անունը կը կոչեն Յիսուս, որովհետեւ նա պէտքէ փրկի իւր ժո-

ղովրդին իրանց մեղքերից. Յովսէփը այս տեսիլքից յետոյ հրեշտակի պատուէրին համեմատաւ Ս. կոյսին իւր մօտ պահեց:

Հրէաները մի ժամանակ թագաւորիւն ունէին, առաջին թագաւորը կոչուումէր Դաւիթ, որովհետեւ Դաւիթի ցեղն էր թագաւորում, այս պատճառով էլ թագաւորական տիտոսը կոչուումէր Դաւիթի ասիւն, իսկ մայրաքաղաքն էր երուսաղէմ: Մարիամ Ս. կոյսը և արդար Յովսէփը Դաւիթի ցեղիցն էին, այս պատճառով էլ Յիսուս կոչուումէ Դաւիթի որդի, և համարվումէ թագաւորութեան ժառանգ:

Հռովմայեցիք հին աշխարհի գրեթէ մեծագոյն մասին տիրել էին, նոցա տիրապետութեան տակն էր նաև Հրէաստանը և հրէից ազգը, որ մի հատիկ աստուածապաշտ ժողովուրդն էր բոլոր մարդկութեան կռապաշտ ժամանակը:

Հրէաստանը Հռովմայեցւոց տէրութեան մի գաւառն էր, Յիսուսի ծննդեան ժամանակ, Հռովմայեցւոց կայսրը, որի անունը Սեպտիմիոս էր, հրամայել էր որ իւր իշխանութեան տակ գտնուած բոլոր մարդիկ արձանագրուեն իրանց հայրենական քաղաքի արձանագրութեան (աշխարհագրութեան) մատեանում: Ս. կոյս Մարիամը որ իւր ծնողաց մահից յետոյ Դաւիթեայի Նազարէթ քաղաքում իւր ազգական Յովսէփի մօտ էր ապրում, Յովսէփի հետ միասին եկաւ Բէթղեհէմ քաղաքը ցուցակագրուելու, քաղաքի մէջ գիշերելու տեղ չըգտնելով՝ քաղաքից գուրս մի այրի մէջ իջեւանեց, ուր և ծնաւ Յիսուսին, պատեց խանձարուրով և գրեց նորան մարքում. շրջակայքում եղած հովիւները որոնք իրանց հօտերին հսկում էին, տեսնելով Աստուծոյ հրեշտակին և իրանց վերայ ծագած Աստուծոյ փառքը՝ շատ վախեցան: Հրեշտակը ասումէ նոցա, մի վախենաք, որովհետեւ ձեզ և բոլոր ժողովրդին մեծ ուրախութեան աւետիք եմ տալիս, որովհետեւ ձեր համար այսօր փրկիչ ծնունդ, Նա օծեալ Տէր է Դաւիթի քաղաքում. և այս է նշանը, կրդանէք խանձարրի մէջ փաթաթուած ու մարքի մէջ գրուած մանուկ: Յանկարծ այն հրեշտակի հետ շատ հրեշտակներ սկսեցին Աստուծուն օրհնել և ասումէին, « Փառք ի բարձունս Աստուծոյ և յերկիր խաղաղութիւն ի մարդիկ հաճութիւն »: Երբոր հրեշտակները երկինք վերացան, հովիւները միմեանց ասացին, եկէք երթանք մինչև Բէթղեհէմ և տեսնենք թէ ի՞նչ է այս

բանը որ եղաւ, որ Տէր Աստուած մեզ ցոյց տուեց: Շուտով եկան և գտան Մարիամին Յովսէփին և մտաբքում զրուած Յիսուսին: Հոփիւները հաւատացին ինչ որ ասուել էր մանուկի մասին. և ամենքը, որոնք հովիւներից լսումէին այս խօսքերը, զարմանումէին: Մանուկի ծննդեան ութերորդ օրը, ինչպէս հրեշտակը պատուիրել էր, անունը դրին Յիսուս: Հրէից ստիճութեան համեմատ ծննդեան քառասներորդ օրը Մարիամ՝ սուրբ կոյսը Յիսուսին տարաւ Տաճարը. Աիմէօն անունով մի ծերունի արդար և երկիւղած մարդ, որ երուսաղէմումն էր կենում և սուրբ Հոգուց հրաման էր աւել չրմեռնել մինչև Յիսուսին տեսնելը, սուրբ Հոգւով խմանալով Յիսուսի Տաճար բերուիլը ինքն էլ եկաւ տաճարը, գրկեց Յիսուսին, փառք ստուեց Աստուծուն և ասաց. Հիմա թող մեռնեմ, որովհետեւ տեսայ քո փրկութիւնը, որ ժողովրդի համար պատրաստեցիր: Մարիամն ու Յովսէփը զարմացել էին այս խօսքի վերայ, Աիմէօնը նոցա էլ օրհնեց և Մարիամին ասաց. Սա Հրէաների մէջ շատերի գլորուելու և կանգնելու պատճառ պէտքէ դառնայ. քո սիրտն էլ պէտքէ ցաւի և վշտանայ: Տաճարում Աննա անունով Տէ տարեկան մի այրի կին մարգարէ էլ կար, նա էլ սկսեց Աստուծուց շնորհակալ լինել և Յիսուսի մասին խօսումէր այն ամենի հետ, որոնք Հրէաստանի ազատութեան յոյսը ունէին:

Հրէից Հերովդէս թագաւորի օրով Յիսուսի Բէթղեհէմում ծնուելու ժամանակ՝ մոգերը արեւելքից եկան երուսաղէմ և ասացին. Ո՛ր է Հրէից ծնուած թագաւորը՝ որի աստղը արեւելքում տեսնելով եկանք երկրպագութիւն անելու: Այս բանը երբոր լսեց Հերովդէս թագաւորը՝ շփոթուեց, կանչեց քահանայապետներին ու կարդացողներին, հարցնումէր թէ որտեղ է ծնուելու Քրիստոսը, նորա էլ ասումեն. Հրէաստանի Բէթղեհէմ քաղաքում: Այն ժամանակ Հերովդէսը ծածուկ կանչեց մոգերին, աստղի երեւալու ժամանակը ստուգեց, և նոցա դէպ ի Բէթղեհէմ ճանապարհ դնելով ասաց. գնացէք մանուկի համար ստուգեցէք, և երբոր կրգտնէք, ինձ էլ իմաց տուէք, որ ես էլ գամ երկրպագութիւն անեմ. մոգերը թագաւորից հեռանալով աստղի առաջնորդութեամբ գտան Յիսուսին, և երբոր ներս մտան՝ տեսան Յիսուս իւր մօր հետ և երկրպագութիւն անելով ոսկի կնդրուկ և զմոռու ընծայեցին: Մոգերը հրեշտակի հրամանով ուրիշ ճանապարհով վերադարձան իրանց երկիրը. իսկ հրեշտակը տեսիլքի մէջ երեւաց Յով-

սէփին ու ասաց, վեր առ մանուկին և Վարիամին և գնա Եգիպտոս և այն տեղ կայ մինչև որ ես խնայ կրտամ, որովհետև Հերովդէս կամենումէ սպանել նորան: Յովսէփն էլ առաւ Յիսուսին և Վարիամին և գիշերով փախաւ Եգիպտոս, այն տեղ մնաց մինչև Հերովդէսի մահը: Իսկ Հերովդէս երբոր տեսաւ թէ խաբուել է մոգերից՝ շատ բարկացաւ և ուղարկեց կոտորեց Բէթղեհէմի և նորա շրջակայքի բոլոր երկու տարեկանից փոքր մանուկներին. ամբողջ երկիրը ներկուեց կոտորուած մանուկների արիւնով, իսկ երկրացիք աղի արտասուեցին թափում և անմխիթար էին: Հերովդէսի մահից յետոյ Աստուծոյ հրեշտակի հրամանով Յովսէփ առաւ Յիսուսին և Վարիամ սուրբ կուսին և վերադարձաւ գէպ ի Հրէաստան, և որովհետև Հերովդէսի տեղ թագաւորել էր նորա որդին՝ վախեցաւ Երուսաղէմի մօտ Բէթղեհէմում բնակելու, գնաց Գալիլեայի Նազարէթ քաղաքը:

Յիսուս աճում և զօրանումէր, Վարիամ սուրբ կոյսը և Յովսէփ ամեն տարի Զատիկի տօնին գնումէին Երուսաղէմ ուխտ, միանգամ էլ երբ Յիսուս տասն երկու տարեկան էր արդէն, Զատիկի տօնին գնացին Երուսաղէմ, Յիսուս Տաճարում խօսքի բռնուած լինելով հրէից կարգացողների հետ, Ա. կոյս Վարիամի աչքից անյայտացաւ, որ կարծելով թէ հարեանների հետ տուն դարձած կրկին, ինքն ևս գնաց, բայց չըգտնելով՝ վերադարձաւ Երուսաղէմ սկսեց որոնել, մինչև որ տաճարում հանդիպելով Յիսուսին ասաց, որդեակ, այս ինչ արեցիր դու, Յովսէփը և ես չարշարիւմ էինք և որոնում քեզ: Յիսուս պատասխան տուեց. ինչի՞ էիք որոնում, չըգիտէիք միթէ որ ես իմ Զօրս տանը պէտքէ լինիմ: Նոքա չըհասկացան Յիսուսի ասածը, բայց Յիսուս կամենումէր հասկացնել թէ ինքն լինելով Աստուծոյ որդի, պէտքէ Աստուծոյ տանը, այսինքն Տաճարի մէջ լինէր: Յիսուս Վարիամ Ա. կոյսի և Յովսէփի հետ գնաց Նազարէթ և նոցա հնազանդ էր: Զարգանումէր իմաստութեամբ հասակով և աստուածային ու մարդկային շնորհքով:

Յիսուս երբ երեսուն տարեկան դարձաւ, տեսնելով որ Հրէաները Յովհաննէս Մկրտչից Յորդանան գետում մկրտվումեն ու ապաշխարում, ինքն էլ գնաց մկրտուելու: Յովհաննէս Մկրտիչը տեսնելով թէ Յիսուս գալիս է մկրտուելու՝ ասաց. ես քեզանից պէտք է մկրտուիմ և դու ես ինձ մօտ գալիս: Յիսուս պատաս-

խան տուեց. այժմ այդպէս վայել է. և երբ Յիսուս Յորդանան գետում մկրտութեամբ, Սուրբ Հոգին աղանու կերպարանքով իջաւ նորա վերայ և երկնքից ձայն եկաւ՝ որ ասումէր. Դա է իմ սիրելի որդին, գոյան լսեցէք: Յիսուս մկրտուելուց յետոյ գնաց անապատ, քառասուն օր ծով պահեց և այնուհետեւ սկսեց իւր քարոզութիւնը:

Յիսուսի մկրտութեան տօնը Աստուածայայանութեան տօն էլ է կոչւում, որովհետեւ Սուրբ Հոգին Յիսուսի մկրտութեան ժամանակ իջաւ նորա վերայ, իսկ Հայր Աստուած յայտնեց թէ Յիսուս իւր սիրելի որդին է. և Յիսուս մկրտութիւնից յետոյ սկսեց քարոզել և հռչակուել: Ահա այսպէս Յիսուսի ծնունդն ու մկրտութիւնը շնորհաւորելուց առաջ այս պատմութիւնը արի, սիրելի մանուկներ, որ իմանաք թէ ինչի՞ համար են մարդիկ այդ տօնին այնքան ուրախ լինում. եթէ կամենումէք դուք էլ ուրախանալ և Յիսուսին սիրելի լինել, պէտք է ձեր ծնողներին հնազանդ լինիք ինչպէս ինքն Յիսուս հնազանդ էր, իսկ ծնողները լաւ լաւ բաներ միայն են սորվեցնում ու բարի խրատներ ասելու. իմացէք որ ձեր փոքրիկ անհնազանդութիւնը կրկնապէս ձեր ծնողներին սիրտը և Յիսուսին:

Եթէ հարկը պահանջի, ես ուրիշ էլի այսպիսի պատմութիւններ կանեմ. բայց այս անգամ խօսքս վերջացնումեմ շնորհաւորելով ձեզ և ձեր ծնողներին Յիսուսի ծնունդն ու մկրտութիւնը, ցանկանալով որ դուք մտաւարթեամբ կարդաք այս պատմութիւնը, իսկ ձեր ծնողք կարգան Աւետարանը ու պատմեն ձեզ ինչ որ հարկաւոր է. ապա թէ ոչ, միայն տօներին զարդարուել, ուրախանալ առանց տօնի նշանակութիւնը իմանալու, խորհուրդ չունի: Առ այժմ մնաք բարեաւ, սիրելի մանուկներ:

Յուսիկ Վարդապետ.